№ 103 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 1888 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10 № 103

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տիկին Նիկիֆորովայի գործը. Նամակ Նուխուց. Նամակ Ղուբայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռամկապետական կուսակցութիւնը Միացեալ-Նահանգներում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակամայ պատասխան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ՆԻԿԻՖՈՐՈՎԱՅԻ ԳՈՐԾԸ

Սեպտեմբերի 3-ի նիստի վերջը կարդացվեցան դատարանում այլ և այլ դոկումենտներ և երկու վկայականներ, որոնցից մէկը տուած է տ. Նիկիֆորովային բժիշկ Պոպովից, իսկ միւսը բժիշկ Մրեվլովից։ Բժիշկ Պոպով, որը բժշկում էր մեղադրվածին Թելեղնովոդսկում, վկայում է որ նա ենթարկված է իստերիային և ունի արիւնի պակասութիւն։ Բժիշկ Մրեվլով նոյնն է վկայում, աւելացնելով որ մեղադրվածը հակում էր ցոյց տալիս դէպի անձնասպանութիւն։ Կարդացված նամակներից երևում է, որ դեռ 13 տարեկան հասակում Նիկիֆորովա ուզում էր իրան թունաւորել։ Նա արձակվեցաւ այլ և այլ դպրոցներից աններելի չարութիւնների համար։ Մեղադրվածի մայրը մի անգամ տարաւ իր աղջկան Պետերբուրգի յայտնի բժիշկ-պսիխիատր Մերժէեվսկու մօտ, որը յայտնեց թէ աղջիկը հակում ունի դէպի խելագարութիւն։ Մի անգամ, դեռ աղջիկ ժամանակ, նա ուզում էր խեղդվել դեռի մէջ։

Սեպտեմբերի 4-ին, առաւօտեան, դատարանը ընդմիջում է նիստը և համաձայնվում է, որ բժշկապետ Պավլովսկի, որպէս մասնագէտ հոգեկան հիւանդութիւնների, հետազօտէր մեղադրվածին։ Երբ դատարանի նիստը շարունակվում է, բժշկապետ Պավլովսկի յայտնում է իր արած հետազօտութեան հետևանքը. Նիկիֆորովա փոքր ինչ չիլ է, նրա գագաթը կողքերից սեղմված է, փոս է ընկած, նա ունի միշտ գլխացաւ, նոյնպէս նա ղգում է ցաւեր ողնաշարի մէջ, նրա մարմնի վրա երկու սպի են երևում, որոնք հետևանք են հրաձիգ ղէնքերից առաջացած վէրքերից։ Իրան մեղադրվածի և Միխայլովի վկայութեամբ Նիկիֆորովայի հայրը մի հարբան, անկարգ կեանք վարող մարդ է, իսկ մայրը հիւանդոտ, իստերիային ենթակայ կին է։ Մեղադրվածի հօրեղբայրն էլ էպիլէպսիայով (ընկնոտութեամբ) հիւանդ մարդ է։ Պավլովսկի այն եզրակացութեան է գալիս իր երկար բացատրութիւններից յետոյ, որ մեղադրվածը մի հիւանդ, անբնական, հոգեկան տկարութիւն ունեցող արարած է, որի անցեալ անբարոյական կեանքն էլ ապացոյց է հոգեկան անբնական դրութեան։ Էկսպէրտը շատ հաւանական է ընդունում, որ Նիկիֆորովա իր յանցանքը, Պեկարսկուն սպանելը՝ դործել է անգիտակցաբար, հիւանդոտ, դրդված դրութեան մէջ։ Պավլովսկի յայտնում է թէ իր եզրակացութիւնները նա դատարանին առաջարկում է միմիայն որպէս հաւանական եզրակացութիւններ, իսկ աւելի հիմնաւոր, աւելի հաստատ հետևանքներին հասնելու համար՝ պէտք էր աւելի երկար ժամանակ հետազօտել հիւանդին, դիտել նրա կեանքի եղանակը, հաւաքել իրողութիւնների աւելի մեծ պաշար, աւելի հիմնաւոր կերպով ծանօթանալ նրա անցած կեանքի հետ, սկսած մանկութիւնից, ծանօթանալ նրա ծնողների ֆիզիկական և հոգեկան առողջութեան աստիճանի հետ, քանի որ ժառանգական յատկութիւնները, որ մենք ստանում ենք մեր ծնողներից՝ վճռողական ներդործութիւն ունեն մեր թէ ֆիզիկական, թէ հոգեկան բնական կամ անբնական զարդացման վրա։

Պաշտպան Զէմէսով, հիմնվելով էկսպէրտի ասածների վրա, խնդրում է դատարանը յետաձդել գործը, նորից յանձնել նրան մանրամասն քննութեան՝ ենթարկել տալով մեղադրվածին մանրակրկիտ հոգեբուժական հետազօտութեան և հաւաքելով բոլոր անհրաժեշտ և ամենաճիշդ տեղեկութիւններ թէ մեղադրվածի անցեալ կեանքի մասին, թէ նրա ծնողների ու աղդականների կեանքի մասին։

Դատարանը, խորհրդակցելուց յետոյ, մերժում է պաշտպանի խնդիրքը, յայտնելով որ քննութիւնը բաւականաչափ փաստեր է ձեռք բերել և դործը պարզաբանելու համար նոր հետազօտութեան ու քննութեան մէջ կարիք չէ ղդացվում։

Այս նիստում կարդացվում են դարձեալ մի քանի դոկումենտներ, ինչպէս օրինակ Պեկարսկու զրաղրութիւնը Նիկիֆորովայի հետ և դատարանի նիստը ընդմիջվում է մինչև երեկոյեան ժամի 6-ը։

Երեք ժամվայ ընդմիջումից յետոյ, երեկոյեան ժամը 6-ին, սեպտեմբերի 4-ի նիստը շարունակվեց պրոկուրորի մեղադրական ճառով։

Պրոկուրորը ասում է որ ապրիլի 11-ին, Նիկիֆորովայի բնակարանում, Պեկարսկի սպանվեցաւ մեղադրվածի ձեռքով դիտակցաբար։ Այդ հանդամանքը ապացուցվում է նրանով, որ Պեկարսկի ստացել է երկու վէրք՝ մինը կուրծքի մէջ, միւսը արմունկի մէջ։ Երկրորդ վէրքը, ինչպէս ապացուցել է էկսպէրտիզան, սպանվածին հասցրած է ետևից։ Եւ որովհետև հանդուցեալը չէր կարող ինքն իրան վէրք հասցնել ետևից, ուրեմն վիրաւորողը անշուշտ Նիկիֆորովա է եղել, քանի որ բացի նրանից այդ րոպէին սենեակում մի ուրիշ անձն չը կար։ Պնդելով որ Նիկիֆորովա դիտակցաբար է սպանել Պեկարսկուն, պրոկուրորը չէ ընդունում, որ մեղադրվածը այն տեսակ տկարութեան ենթակայ լինէր, որի շնորհով նա անպատասխանատու լինէր իր արածի վերաբերմամբ։ Մարդկութեան մէջ եղել են շատ նշանաւոր, երևելի մարդիկ, որոնք ենթակայ էին էպիլէպտիական հիւանդութեան, բայց այնու ամենայնիւ նրանք թէ օգտաւէտ էին մարդկութեան, և թէ դիտակցաբար էին դործում միշտ իրանց կեանքի ընթացքում։ Պրոկուրորն ասում է, որ մեղադրվածը դիտմամբ լռում է բէլվօլվերի երկրորդ հարուածի մասին և առհասարակ, այն րոպէից, երբ պաշտպանը սկսեց իր բոլոր դատողութիւնները հիմնել մեղադրվածի հիւանդոտ և անբնական հոգեկան դրութեան վրա, մեղադրվածը, որը սկզբնական քննութեան ժամանակ ամեն բան յիշում էր ու սպանութեան բոլոր հանդամանքները պատմում էր, այժմ իր համար աւելի ձեռնտու է համարում լռել, ոչինչ չը պատասխանել դատարանի հարցերին և այնպէս ձևանալ, իբր թէ ամեն բան մոռացել է։ Այնուհետև պրոկուրորը իր երկար ճառի մէջ սկսում է նկարագրել Նիկիֆորովայի ամբողջ անկարգ և անբարոյական կեանքը և այն եզրակացութեան է դալիս, որ մեղադրվածը, որը ծախսում էր իր մարմինը, չէր կարող սիրել անկեղծ, անձնուէր սիրով, այլ նրա սէրը եսական էր։ Անդուսպ, կամայական բնաւորութեան տէր լինելով, մեղադրվածը համ ուզում էր հարուստ դիրք, շռայլութիւն վայելել, օգտվելով հարուստ վաճառական Դուխինովի նիւթական միջոցներից, համ էլ առանց բաժանվելու նրանից, ուզում էր Պեկարսկու սէրը վայելել։ Եթէ նա ճշմարիտ, անկեղծ, անձնուէր կերպով սիրէր Պեկարսկուն, նա չէր շարունակի ապրել հարուստ վաճառականի հաշուով։ Պեկարսկի իր մտաւոր զարդացմամբ, իր դաստիարակութեամբ Նիկիֆորովայից աւելի բարձր լինելով, թէև մի անդամ կապվել էր նրա հետ, բայց վերջ ի վերջոյ սկսեց ձանձրանալ այդ անյարմար կապերից, քանի որ այդ երկու անհատների մէջ ոչինչ ընդհանուր բարոյական շահ, ոչինչ հոգեկան և բարոյական համերաշխութիւն չէր կարող լինել։ Նիկիֆորովա հասկանալով, որ իր՝ սիրեկանի ղդացմունքները սկսում են հետզհետէ սառչել, ամեն միջոց դործ է դնում նրա սրտում խանդոտութեան ղդացմունքը առաջ բերելու։ Նիկիֆորովա հասկացել էր որ Պեկարսկի սառել է և այլ ևս դրա մէջ կարիք չունի, հասկացել էր որ ինքն իր նախկին սիրեկանի համար ձանձրալի է դարձել։ Մեղ ասում են, աւելացրեց պրոկուրորը, որ մեղադրվածը ուզում էր անձնասպանութիւն դործել. բայց դա չէ մեղմացնում նրա յանցանքը։ Եթէ նա որ և է իրաւունք ունէր իր սեփական կեանքին վերջ տալ, սակայն նա ոչինչ իրաւունք չունէր վերջ տալ ուրիշի կեանքին, զրկել ծնողներին իրանց որդուց, զրկել հասարակութիւնը իր օգտաւէտ անդամից, զրկել պետութիւնը իր օգտաւէտ դործիչից։ Մեղադրողը չէ նկատում մեղադրվածի մէջ անկեղծ ղղջման մի նշոյլ անդամ. նա սպանվածի մահից յետոյ հագնում է սև հագուստ, փոքր ինչ լաց է լինում և աւելի ոչինչ. և դեռ յանդգնում է մեռածի դերեզմանի վրա պսակ ուղարկել՝ մարդասպանի պսակը իր զոհի դերեզմանի վրա։ Նա դրանով չը խնայեց մինչև անդամ վշտացած ծնողների ղդացմունքը։ Պրոկուրորը, պնդելով որ մեղադրվածը պէտք է ենթարկվի պատժողական կանոնադրութեան 2-որդ մասի, 1445 յօդուածի զօրութեամբ, թէև պատժի միջակ չափին, վերջացնում է խօսքը ասելով դատաւորներին. «ես ձեզանից, պարոններ դատաւորներ, ոչ թէ վրէժխնդրութիւն եմ պահանջում, այլ արդարութիւն»

Այնուհետև խօսքը տրվում է պաշտպանին։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Սեպտեմբերի 3-ին

Մի սև և սարսափելի դէմքով մարդ, պարսիկ, բարձր հասակով և կանաչ հագուստով, ման է դալիս Կովկասի դաւառական քաղաքները որպէս աչքի բժիշկ և իւրաքանչիւր քաղաքում մի փառաւոր խաղ խաղալուց յետոյ, անցնում է զիշերով մի ուրիշ տեղ։

Քան օր առաջ նա յայտնվեցաւ Նուխում. քաղաքի մի յայտնի քարվանսարայում, նոյն իսկ իմ դրասենեակի կողքում վարձեց սենեակ և ըսկսեց ընդունել աչքացաւով հիւանդներին։ Առաջին անդամից ես ուշադրութիւն չը դարձրի այդ անձնաւորութեան վրա, կարծելով որ դա կը լինէր մէկը այն բազմաթիւ պարսիկ աչաբոյժերից, որոնցից կան նաև յայտնի աջողութիւն ունեցողներ, բայց իմ կասկածս սկսեց աւելանալ այն օրից, երբ Շուշիից եկող մի թուրք պատահմամբ տեսնելով նրան այստեղ, նկատեց մի ուրիշին, որ այդ մարդը Շուշում շատ թուրքերի աչքերը կտրտեց, մօտ 5, 6 հարիւր ռուբլի փող ստացաւ

դիտմամբ մոռացութեան տալ յայտնված կարծիքները, և զբաղվել հակառակորդի անձնաւորութեամբ։

Իսկապէս շատ «մաղալլու» է «Արձագանքի» յօդուածադիրների դրութիւնը. նրանք «մի հարուածով երկու նապաստակ են ուզում սպանել». նրանք համ ուզում են մեղ պատասխանած լինել, ընթերցողի առաջ «պարտ չը մնալու» համար, համ էլ մի և նոյն ժամանակ ուզում են խոյս տալ մեր յայտնած կարծիքներին պատասխանելուց, ասելով որ մեր «կարծիքները զուրկ են լրջութիւնից»։ Մեթէ՞...,

Ամեն մարդ ազատ է իր սեփական, նոյն իսկ շատ անմիտ և անհիմն կարծիքն ունենալու, բայց երբ հրապարակական վիճաբանութիւն կայ մի ընդհանուր հարցի մասին, այդ դէպքում թուլութեան նշան է ասել՝ «ձեր կարծիքները զուրկ են լրջութիւնից» և անցնել. ընդհակառակը, պէտք է ցոյց տալ, պէտք է ապացուցանել այդ բանը։ Իսկ եթէ անկարող էք ցոյց տալ և ապացուցանել, այն ժամանակ դրական աղնութիւնը պահանջում է լռել,—և ուրիշ ոչինչ։

Մենք ասում ենք, որ ձեր լեզուաբանական դատողութիւնները միմեանց հակասող են։ Դրա համար մենք ապացոյցներ բերեցինք, և այդ հիման վրա այն միտքը յայտնեցինք, որ ձեր դատողութիւնները ուշադրութեան արժանի չեն։

Դուք՝ անկարող լինելով մեր ասածները հերքելու և ընթերցողի աչքերին թոզ փչելու համար փոխանակ պատասխանի, մեղ հայհոյանքներ էք ուղարկում։

Մենք ձեզ ասում ենք. դուք, պարոններ, անհետևողական էք. մեղադրում էք «Մշակին» որ նա աւաղաղում է հայոց նոր լեզուն, մտցնելով նրա մէջ օտար բառեր և դարձուածներ, և ինքներդ մոռանալով ձեր ասածը՝ դործ էք ածել և դործ էք ածում նոյն իսկ այն օտար բառերը և դարձուածները, որոնց դործադրելու համար «Մշակին» մեղադրում էք։

Իսկ դուք փոխանակ հերքելու մեր ասածը, կամ խոսաովանելու ճշմարտութիւնը՝ սկսում էք անձնական վերաւորանքներ դուրս թափել ձեր բթացած դրչի տակից....

Մենք մեր անցեալ յօդուածում մանրամասնաբար վերլուծեցինք ձեր առաջ բերած բառերը և դարձուածները, ցոյց տուեցինք, որ այդ բառերը ռուսերէն չեն, այլ ընդհանուր են բոլոր հնդկա-եւրոպական լեզուների համար, ցոյց տուեցինք որ կանոնաւորվող և առաջադիմող լեզուն անկարող է չօգտվել եւրոպական հարուստ լեզուների բառերից, և դուք այժմ, փոխանակ հրապարակով խոստովանվելու այդ ճշմարտութիւնը, «խօսքը կտուրն էք դցում» և կողմնակի կերպով համաձայնելով, որ օտար բառեր կարելի է դործածել, սկսում էք խօսել վերջաւորութիւնների մասին։ Դուք այժմ ուրիշ բանի մասին էք խօսում. և դուք ուզում էք որ մենք դործ ածենք ոչ թէ ագիտացիա, այլ ժիտասիոն, (ֆր. agitation). դուք ռուսերէն էք համարում ակցիզ բառը. բայց չէ՞ որ դերմաներէն էլ die accise և ֆրանսերէն էլ accise է, (որ դուրս է եկել լատիներէն accisum բառից)։ Մեր թթուած դրաբարեանները մի ժամանակ էլ դործ էին ածում ժեներալ (ֆր. général, լատ. generalis) փոխանակ դեներալ ասելու. դրանք մի ժամանակ դործ էին ածում ժիմնազիօն (յուն. gymnos բառից, ֆրանս. gymnase) փոխանակ դիմնազիա ասելու. բայց, ի հարկէ այդ բոլորը մնաց առանց հետևանքի և այժմ իրանք այսպէս ասողները սկսել են դործ ածել դիմնազիա, դեներալ և այլն։ Կան շատ այդպիսի բառեր, որոնց վերջաւորութիւնը ռուսական է,

և մի գիշեր անհետացաւ քաղաքից, բոլոր հիւանդներին էլ ամենավատ դրութեան մէջ թողնելով։ Այդ օրից իմ այդ տարօրինակ հարևանը ուշադրութիւնս բոլորովին գրաւեց. սկսեցի հետևել նրա գործունէութեան և երբեմն ներկայ լինել նրա օպէրացիաներին։ Այդ հանդարտ և կատարեալ սառնասրտութեամբ գործ դրված օպէրացիաները այնքան սարսափելի էին, որ այս բոպէիս էլ յիշելով սառսռում եմ։ Պատմեմ մի երկու օրինակ։ Մօտենում է մի թուրք, որի աչքերից մէկը դիցուք ցաւում է։ Նա խոստանում է նրան բժշկել, պահանջելով օրինակ 30 ռուբլի վարձատրութիւն, որից 15 ռ. առաջուց ստանում է։ Պառկեցնում է նրան յատակի վրա, երկու հասարակ երկաթեայ կեռերով աչքերից յետ է տանում կոպերը և դանակով կտրում աչքի միջից բարակ թափանցիկ փառը, որը առաջուց մասամբ ծածկած է լինում աչքը։ Անցնում է մի երկու օր, կրկին յայտնվում է նոյն մարդը գանգատվելով, որ աչքը այժմ աւելի սաստիկ է ցաւում և ոչինչ չէ տեսնում. նա նրան չոքեցնում է իր առաջ։ Երկու երկաթեայ ձողեր, մատիտի հաստութեամբ, դնում է կրակի վրա և երբ նրանք կատարելապէս կարմրում են, վեր է առնում այդ բոլորովին չիկացած երկաթը և դիպցնում է հիւանդի գլխին երկու կողմից։ Մեր կողմերում էշերին են այդպէս դաղում, բայց դարձեալ խղճմտանքով, որովհետև էշերին երբէք ղըլխից չեն դաղում։

Ներկայանում է մի ուրիշը. առնում է նրանից մի 10 ռուբլի, ինչ որ մի դեղ ածում է աչքերի մէջ, նստեցնում, հանում է գրպանից Պարսկաստանում հատը $1/2$ շահով ծախվող մի անպիտան դանակ և առանց երկար ու բարակ մտածելու քթի վերևի կողմից աչքի մօտ ծակում է, կոխելով դանակը մի կողմից և հանելով միւս կողմից. արիւնը թափվում է առատութեամբ....

—Հէքիմ,—մօտենում է նրան մի թուրք—տանը մի կին կայ աչքերը ցաւում է, գնանք տես։

—Ցեսնել հարկաւոր չէ—պատասխանում է հէքիմը—այդ դեղը գործածեցէք, կը լաւանայ, և այդ խօսքերի հետ հանում է գրպանից եղեգնեայ ամանների մի կապ, և նրանց մէկից ածելով սպիտակ դեղը տալիս է խնդրողին, ի հարկէ, նախապէս իր վարձատրութիւնը ստանալով։

Այդ տեսակ հրէշաւոր բժշկութիւնը անկարելի էր, որ առանց հետևանքի մնար. մի տան և հինգ օրից յետոյ նրա սենեակի առջևը լի էր գանգատաւորներով. առանց բացառութեան բոլորի էլ աչքերը վատացել էին ում որ դեղ էր տուել կամ կտրել էր։

Հէքիմի կարծես հոգը չէր, նա ամենքին էլ ասում էր, որ մի քանի օր էլ սպասեն և նրանց աչքերը շատ պայծառ կը տեսնեն. բայց ինքը արդէն սկսել էր բաղարում իր ստացած թղթադրամները ոսկիի փոխել, և մի գեղեցիկ գիշեր իր օգնական ծառայի հետ միասին իրանց սեփական ձիերի վրա հեծած անհետացան քաղաքից։

Հիւանդները, որոնց թիւը քիչ չէ, նոր են հասկացել, որ դա մի ճարպիկ «ջիբգիր» է եղել և ուրիշ ոչինչ. մարդիկ են ուղարկվել Կոնից բռնելու համար, բայց արդէն ուշ է եղել։ Նա հեռացաւ այստեղից անկասկած մի ուրիշ տեղ նորից իր խաղը խաղալու, ուստի ես աւելորդ չեմ համարում մեր հասարակութեան նախազգուշացնել այդ մարդուց։

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Սեպտեմբերի 3-ին

Անցեալ ուսումնական տարվայ ընթացքում քանի մի հրէաներ ներկայանալով Ղուբայի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութեանը՝ խնդրել էին իրանց զաւակներին նոյն դպրոցում ընդունել հայ աշակերտների շարքում։ Բայց որովհետև աշակերտների ընդունելութիւնը արդէն դադարել էր և, որ գլխաւորն է, հայոց ծխական դպրոցների համար սահմանած կանոնադրութեան մէջ չը կայ մի օրինական յօդուած, որի հիման վրա կարելի լիներ ուրիշ կրօն դաւանողներին ընդունել լուսաւորչական հայ աշակերտների թիւում,—այդ պատճառով այդ տեսակ առաջարկութիւն անողներին դրական, կամ բացասական պատասխան տալը յետաձգել էր մինչև ներկայ 88—89 ուսումնական տարին։

Այժմս, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, մօտ ժամանակներս հոգաբարձութիւնը դիմել է Շամախու թեմական (Ղուբան ենթարկվում է այդ թեմին) առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոսին, խնդրելով, որ եթէ հնարաւոր է, սրբազանը թոյլատրութիւն տայ հրէաներին աշակերտներ ընդունել իր խնամատարութեան յանձնված ծխական դպրոցում։ Այդ դեռ չը լուծված հարցը զբաղեցրել է մեր քաղաքի մի շարք բանիմաց և ազգային գործերի առաջադիմութեան նախանձախնդիր կոչված յարգելի անձնաւորութիւնների մտքերը, ուստի ինձ ցանկալի էր իմանալ նրանց կարծիքը այդ մասին։ Ցանկութիւնս շուտով բաւարարութիւն ստացաւ։ Երբ մի քանի մարդկանց մէջ այդ առիթով խօսակցութիւն էր բացվել, որին պատահմամբ ես էլ ներկայ գտնվելու առիթ էի ունեցել, նրանցից մէկը ասում էր թէ՝ հայերիս համար ուրախալի երևոյթ է, որ հրէաներն անդամ հետաքրքրվում են մեզանով, որ նրանց մէջ ցանկութիւն է ծնվում մօտենալ մեր դպրոցին, ուսում առնել.... Բայց գտնվեցան մարդիկ, որոնք ճանաչելով հրէաներին իբրև թէ վնասակար, համարեցին այդ հարցի իրագործվելը՝ տարաժամ և անպատեհ։ Դեռ մի քանիներն էլ վախենում են, որ հրէաները հայի ձեռքից դիտութիւնները խլեն։

Թէ այսպէս և թէ այնպէս, այդ մի կողմ թողնելով, ակամայ ստիպված ենք մեր դպրոցական գործերը ղեկավարող բարեմիտ պարոնների աչքում իրագործելի երևացող այդ հարցի վրա ուսումնական տեսակէտից մի թեթև հայեացք ձգել։

Ուսուցիչը, ինչպէս ասում են, բոլոր աշակերտներին մի աչքով պէտք է նայի, նա չէ կարող մէկին սիրել, իսկ միւսին ատել, մէկի առաջադիմութիւնը առաջ մղել, իսկ միւսինը թողնել անշարժ դրութեան մէջ կամ նախախնամութեան կամքին յանձնել։ Ուրեմն ուսուցիչը չէ կարող և իրաւունք չունի մի և նոյն դասարանում բաղմած հայ և հրէայ աշակերտների մէջ որ և է խտրութիւն դնել, այլ նրա սրբազան պարտականութիւնն է երկուսի մտաւոր զարգացումը առաջ տանել զուգընթացաբար, հաւասարապէս։

Բայց թէ արդեօք կարելի է հայի և հրէայի ընդհանուր զարգացողութիւնը հայոց դպրոցում առաջ տանել հաւասարապէս,—դժուարանում եմ դրական պատասխան տալ։ Հայոց ծխական դպրոցներում, բացի ռուսաց լեզուից, պատմութիւնից և Ռուսաստանի աշխարհագրութիւնից, բոլոր առարկաները աւանդվում են հայոց լեզուով, որի հետ հրէան իսկաւ ծանօթ չէ. իսկ հայ աշակերտը, թէպէտ և գրագիտութեան կողմից հաւասարվում է հրէային, այնու ամենայնիւ իր մայրենի լեզուով խօսելու կարողութիւնը տարիների ընթացքում սեփականել է իր ծնողներից և շրջապատող կեանքից, որը նրա զարգացման գլխաւոր օժանդակիչ մասն է կազմում։ Հոգ չէ, որ նա դրականական լեզու չը գիտէ. ուսուցիչը կը հարթէ նրա գաւառական բարբառը և այդպիսով նա շուտով ձեռք կը բերէ դրականակա-նը։ Այստեղից պարզապէս երևում է, որ հայոց ծխական դպրոցներում հայ և հրէայ աշակերտների մտաւոր ընդհանուր զարգացողութիւնը հաւասարապէս առաջ մղելը՝ աւելի քան դժուարագոյն է։ Ամենայն դէպս, եթէ հրէաները ընդունվելու լինեն մեր դպրոցում, անտարակոյս դասաւորութիւնը դանդաղ պիտի ընթանայ։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 9-ին

«Մշակի» անցեալ 101 համարում մի լուր տպվեց մի պարոնի ձեռնարկութեան մասին քաղաքա-տնտեսական դասախօսութիւններ կարդալու։ Հիմք կայ կարծելու, որ այդ լուրը մի թիւր հաղորդութիւն է իմ դիտաւորութեան մասին դալ հոկտեմբերի 14-ից բանալ «կուրսեր» այն բոլոր երիտասարդների համար, որոնք կամենում են իրանց նուիրել տնտեսական և մասնաւորապէս առևտրական ասպարիզին մեր երկրում։ Բայց այդ կուրսերը չեն լինելու դասախօսութիւններ ընդհանուր քաղաքա-տնտեսական բովանդակութեամբ, ինչպէս այդ կարելի է մակբերել ձեր հաղորդած լուրերից, այլ կրելու են մի խիստ որոշ և բոլորովին գործնական բնաւորութիւն։ Իմ հիմնադրած կուրսերը կազմում են մի ուսումնարան, որտեղ ունկնդիրները պիտի ծանօթանան Անդրկովկասի արդիւնաբերութեան և առևտրի բոլոր գլխաւոր ճիւղերի հետ, որոնք, իմ ծրագրի մէջ, 16 առարկաների մէջ են ամփոփված։ Մեր երկրում ունենալու մի առևտրական դպրոցի գլխաւոր առարկան է այդ, և դա է, որ կազմելու է իմ հիմնադրած կուրսերի գլխաւոր և պարտաւորիչ առարկան։ Եւ այդ ամենակարևոր առարկայումն է, որ իմ դպրոցը պէտք է տարբերվի մինչև այժմ մեր երկրում ունեցած առևտրական ուսումնարաններից կամ կուրսերից, որոնց միակ նպատակն է եղած հաշուապահներ պատրաստել և ոչ թէ իսկապէս առևտրական դասակարգի մի սերունդ ստեղծել։ Հաշուապահութեան և նոր լեզուների մէջ գրավարժութեան իմ դպրոցում պիտի խրվի իրանց պատշաճաւոր, բայց համեստ տեղը։

Մանրամասնութիւնները շուտով կը յայտնվեն յայտարարութիւններով։

Աւ. Արասխանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒԻՈՐՑ մեզ գրում են։ «Ուսումնարաններում աշակերտների ընդունելութիւնները սկված են օգոստոսի 25-ից և դեռ շարունակվում են։ Զինուորագրութիւնը մի այնպիսի զարկ է տուել մեր ժողովրդին, որ հայ գիւղացին իր վերջին կօպէկը չէ խնայում որդուն գիր սովորեցնելու։ Գիւղացիներից շատերը, ցորեն չը լինելու պատճառով, ծախել են իրանց ունեցած-չունեցածը՝ ձի, կով, դոմէշ, եզ,—գիւղացու այդ սիրելի աշխատակիցները,—որպէս զի իրանց որդիքը վաղը զինուոր գնացած ժամանակ խեղճ չը մնան։ Այդ յոյսով նրանք իրանց որդիներանց վերցրած՝ շտապում են Նուխի, բայց տարաբաղդաբար շատերի յոյսերը օդն են ցնդում, քանի որ գեղջուկ պատանիները իրանց հասակին համապատասխան մտաւոր պատրաստութիւն չունեն։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են հետևեալը։ «Երկաթի գործարաններից համարեա ոչ մէկում գործ չը կայ։ Զը նայելով դրան Գուստավ Լիստ իր կապալով վերցրած Շահգէդանեանցի գործարանը կրկնակի ընդլայնում է, հնի վրա աւելացնելով մի ահագին կաթսայագործարան։ Սուտ է այն լուրը իբր թէ Շահգէդանեանի գործարանից դուրս եկող հայերը մնացել են անգործ։ Ընդհակառակը նրանք ամենայն աջողութեամբ ընդունվում են ամեն տեղ, և տակաւին չը դուրս եկածներին էլ հազար մի առաջարկութիւններ են լինում։ Նորերումս բացվել էր մի գործարան (տէրը հայ է Գ. Յովհաննիսեան անունով)։ Այդ պարոնը անպայման հաւատացած էր, որ հայերը անպէտք գործողներ են, և այդ պատճառով ամենքին հեռացնում էր. այժմ լսում ենք, որ պ. Յովհաննիսեան երկար փորձից յետոյ, գտնում է իրան սարսափելի սխալված։ Այդպէս ընկնելով հարբեցող, ծոյլ, գործից փախչող, արտաքնոցներում ժամերով ծխող գործաւորների ձեռքը, նոր է հասկանում նա հայ բանուորի նշանակութիւնը։ Թէև շատ ուշ, բայց թող այդ բանը լինի օրինակ շատ հայերին և օտարներին։ Մենք այնուամենայնիւ չնորհաւորում ենք պարոնին իր սխալից ազատվելու համար։»

—

Մայրաքաղաքի ռուս լրագիրները հաղորդում են որ կոմս Լորիս-Մելիքով, որը այժմ Շվեյցարիայի Վըվէ քաղաքումն է ապրում, Նորերումս հիւանդացել է վտանգաւոր կերպով։ Այժմ կոմսի առողջութիւնը լաւանում է։

—

«Русскій Курьеръ» լրագիրը հաղորդում է որ կոմս Հերբերտ Բիսմարկ գտնվում է այս բոպէիս Ռուսաստանում։ Նա, որպէս հիւր, ապրում է Բերլինի ռուսաց դեսպան կոմս Շուվալովի Ֆրիդրիխշտադ կալուածքում, Կուրլանդիայում։

—

«Новороссійск. Телегр.» լրագիրը հաղորդում է որ Սիբիրի Ցոմսկ քաղաքի համալսարանի բացման օրը՝ Օդէսայի համալսարանը ուղարկեց մի շնորհաւորական հեռագիր նոր համալսարանին, մի և նոյն ժամանակ Օդէսայի համալսարանի վարչութիւնը վճռեց ընծայել Սիբիրի համալսարանի գրադարանին մինչև այժմ իր բոլոր հրատարակած «Արձանագրութիւնները», որոնք կազմում են 30 հատոր։

—

ինչպէս կոնսիստորիա (ռուսերէն консисторія, լատ. consistere բառից, ֆր. consistoire), ֆիզիկա, ռուսերէն—физика, յունարէն physike). ամենքը այդ վերջաւորութիւններով գործ են ածել, և այդպէս էլ գործ կածեն։ Ցիծաղելի է, որ «Արձագանքը» համաձայն չը լինելով այդ բանին նոյն իսկ այդ յօդուածում գործ է ածում սոցիոլոգիական, բիոլոգիական, փսիխոպատիա (соціологія, біологія, психопатія), փոխանակ գործ ածելու սոսիոլոգի, բիոլոգի և այլն, ինչպէս ֆրանսերէնն է։

Դա ունի իր յարգելի պատճառները, և մեր թթու հայկաբանները, որոնք իրանց յօդուածներում խօսում են սոցիոլոգիական (?) (կամ իրանց լեզուով հասարակաբանական ?) երևոյթների մասին, գոնէ պէտք է հասկանային լեզուաբանական այդպիսի երևոյթների սոցիոլոգիական և քաղաքական պատճառները, որոնց մանրամասնութեան մէջ, ի հարկէ մենք չենք կարող մըտնել.....

Բայց տարաբաղդաբար օպպոզիտիստ «Արձագանքին» աւելի անձնաւորութիւններն են հետաքրքրում, քան թէ հրապարակի վրա դրված խնդիրը։ «Արձագանքի» յօդուածագիրները շատ նման են այն փչացած ընթերցողին, որը յօդուածի վերնագիրը նայելուց յետոյ՝ իսկոյն ստորագրութեանն է նայում, ուզենալով իմանալ թէ ով է գրել յօդուածը, և աւելի հետաքրքրվում է նրանով թէ «ով» է գրել, և ոչ թէ նրանով՝ թէ «ինչ» է գրել։ Ինչպէս երևում է մեր «պասպորտաւոր գրողները» շատ են ուրախացել, երբ «Մշակի» № 96 և 97-ի մէջ տպած յօդուածի տակ տեսել են Խ. Մ. տառերը. ապա թէ ոչ ինչ պէտք է պատասխանէին, քանի որ իրանց վերջին պատասխանը համարեա ամբողջապէս վերաբերում է Խ. Մ.-ի անձին ու նրա ունեցած գիտութեանը։ Ինչ պէտք է գրէին այդ պարոնները եթէ այդ յօդուածների տակ ստորագրած չը լինէր Խ. Մ., այլ ստորագրած լինէր դիցուք Դոկտոր Զ. Զ.։

Հաւատացնում ենք ձեզ, պարոններ, որ մեզ մի վայրկեան անգամ չէ հետաքրքրել այն հարցը, թէ ով է «Արձագանքի» յօդուածների տակ ստորագրող N. N. արդեօք ինքը «Արձագանքի» խմբագիրն է այդ, թէ նրա «պասպորտաւոր գրողներից» մէկը.—այդ մեզ համար մի և նոյն է. մեզ հետաքրքրողը յօդուածի բովանդակութիւնն է, որի մասին ձեռքը խղճի վրա դրած կարող ենք ասել, որ շատ անմիտ և նոյն իսկ շատ անպատկառ է. մենք այդ յօդուածի համար միշտ կասենք որ անմիտ է, ուղում է նրա գրողը լեզուագիտութեան դոկտոր լինի, թէ մագիստրոս, դործակատար թէ մի ադրտէր։

Ժամանակ է մեր ժողովրդի մտաւոր կեանքի այդ տեսակ առաջնորդողներին և «անձնամոլ» հրապարակախօսներին իմանալու, որ մամուլը և գրականութիւնը ոչ մաքսատուն է, և ոչ էլ ոստիկանատուն, որտեղ մտնողից կարելի լինէր հարցնել՝ «դիպլոմ ունէք», ինչպէս մաքսատներում կամ ոստիկանատներում հարցնում են՝ «պասպորտ ունէք»։

Բայց այդ բոլորից աւելի ծիծաղելին այն է, որ «Արձագանքը», ինչպէս ամեն ժամանակ և ամեն հարցում, այնպէս էլ այս անգամ, հայհոյելով մեզ, չօշափելով մեր անձնաւորութիւնը, չէ ամաչում ասել, որ «մենք ենք յիշոցներ տալիս»։

Դա արդէն մի նոր տեսակ աչքակապութիւն է, որ կարելի է միմիայն այդ շաբաթաթերթից և նրա հրապարակախօսներից սպասել։

Իսկ «Արձագանքի» այդ տեսակ անտեղի և անմիտ վարմունքը լեզուաբանական մի ընդհանուր հարցի քննութեան մէջ, ուրիշ ոչինչ չէ նշանակում, բայց եթէ թուլութիւն, և ակամայ խոստովանութիւն, որով ցոյց է տալիս, թէ այլ ևս ոչինչ հիմք չունի վէճը օրինաւոր կերպով շարունակելու համար։

Մենք այդ համարում ենք պարտութիւն,—և ուրիշ ոչինչ։

Ուրեմն լեզուաբանական հարցը վերջացած կարող ենք համարել։

Իսկ ինչ որ վերաբերում է «Արձագանքի» հայհոյանքներին, և «Մշակի» աշխատակիցների հասցէին ուղղած վիրաւորանքներին,—մենք այդ մասին առանձին կը խօսենք։ Հայհոյանքների մէջ, ի հարկէ, չենք յանդգնի մրցել «Արձագանքի» հետ, բայց յոյս ունենք, որ կարող ենք ազատ պահել ընթերցող հասարակութեանը այդպիսի աչքակապութիւններից, որոնց իր համար սովորութիւն է դարձրել «անձնամոլ» չաբաթաթերթը....

Խ. Մ.

Սրանից մի քանի ժամանակ առաջ հաղորդեցինք մեր լրագրի միջոցով, որ կառավարչական դպրոցներում հայ աշակերտներին կրօնը պէտք է աւանդվի հայոց լեզուով։ Բայց, ինչպէս երևում է մեզ հասած տեղեկութիւններից, ներկայ ուսումնական տարվայ վերաբերութեամբ դեռ ոչինչ կարգադրութիւն չէ եղած, այդ մասին, և այդ առարկայի դասաւանդութեան հարցը նախկին դրութեան մէջ է։

—

Ինչպէս երևում է Թիֆլիսում արդէն սկսել են բարձրացնել ոչ թէ միայն հիւրանոցների սենեակների, այլ և մասնաւոր տների գները, այնպէս որ այժմ բնակարանները շատ աւելի թանգ արժեն քան թէ առաջ։ Եթէ այդպէս շարունակվի մինչև մի տասն և հինգ օր, հիւրանոցների սենեակների գները ոչ թէ միայն կը կրկնապատկվեն, այլ նոյն իսկ մի քանի անգամ աւելի կը թանգանան։

—

Երբեմն Թիֆլիսում հրատարակվող «Զիա» լրագիրը, որը դադարած էր վերջին ժամանակները, եկող 1889 թվից, ինչպէս լսել է «Новое Обозрѣніе», պիտի սկսի հրատարակվել ամեն օր։

—

«Մշակի» № 97-ի մէջ Թիֆլիսի Քամոյեանց եկեղեցու զպրոցի հոգաբարձութեան մասին տրված լուրը հաղորդում էր, որ այդ զպրոցի համար ընտրված նոր հոգաբարձները հաստատված են Կաթողիկոսից։ Բայց դա մասամբ ճիշդ չէ։ Մեզ հասած հաստատ տեղեկութիւններից երևում է, որ պ. Բալա-բէգ Մելիք-Ղարագեօզեան, որը առաջին ընտրվածն է եղել, բայց է թողված, և հոգաբարձական պաշտօնի մէջ հաստատված են միւս ընտրվածները միայն։

—

Մօտաւորապէս սեպտեմբերի 20-ից բանկի թատրօնում կը սկվին թէ վրաց և թէ ռուսաց դրամատիական ներկայացումները։ Ռուսաց ներկայացումները կը տրվին պ. Ֆօրկատտիի ղեկավարութեամբ, ինչպէս և անցեալ տարի։ Ֆօրկատտիի այս տարվայ խումբը բաղկացած է համարեա բոլորովին նոր դերասաններից և դերասանուհիներից։

—

ՏԱԹԵՎԻՑ մեզ գրում են. «Տաթևի յաջորդութեան պատկանող տեղերում սպասում էին թեմական առաջնորդ Սուքիաս եպիսկոպոս Պարղեանի գալուն։ Բայց առաջնորդը չայցելեց Տաթևի յաջորդութիւնը,—և կիսատ թողնելով իր ճանապարհորդութիւնը վերադարձաւ Էջմիածին, որտեղից պիտի ուղեկցի Կաթողիկոսին դէպի Թիֆլիս»։

—

Հալաբար թաղի Ս. Մինաս եկեղեցու երեցփոխ պ. Նազար Ղազարեան խնդրում է մեզ տպել հետևեալը. «Մշակի» № 99-ի մէջ կարդացի մի լուր, որով պ. լրատուն ինձ մեղադրում է երեցփոխանութեանս վեց տարվայ ընթացքում ոչ մի անգամ հաշիւ ներկայացրած չը լինելու և կօնսիստորիայից ստացած ժապավինեալ մատեանը կորցնելու համար։ Թէ ես մեր եկեղեցու հաշուատեսների պահանջած ժամանակ միշտ ներկայացրել եմ ցանկացած հաշիւը, դրա մասին կարող են վկայել ոչ միայն հաշուատեսները, այլ և «առաջնորդական յանձնարարութեանց յանձնաժողովը», որի ձեռքին են գտնվում այսօր՝ բացի 1887 թուականի հաշուեմատեանից, որը շուտով ներկայացնելու եմ, մնացած բոլոր տարիների մատեանները։ Իսկ ինչ վերաբերում է կօնսիստորիայից ստացած նուիրատուութեան մատեանին, այդ մասին պ. լրատուն կարող է ապահով լինել, որովհետև յիշեալ մատեանը այսօր էլ գտնվում է հաշուատես պ. Նազար Ալիեանցի մօտ։ Ցանկալի էր միայն որ յիշեալ մատեանի մէջ ստորագրված մի քանի անձինք, որոնց թըւում և մասնաւոր ուսումնարանի տէր պ. Պօղոս Քաթանեանց, վճարէին իրանց կամ իրանց կանանց ստորագրած գումարները, որը կը լինէր պարտաճանաչութեան լաւ օրինակ ուրիշների համար էլ»։

—

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ, որ հանգուցեալ հայր Ալէքսանդր վարդապետ Աբաբատեանի տեղ, մօտ օրերումս նշանակվեցաւ հայր Պօղոս վարդապետ Նահապետեան, որպէս կաթոլիկ հայերի վիճակային կառավարիչ։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ «Կիրակի, սեպտեմբերի 11-ին, պ. Տէր-Դաւթեան, մասնակցութեամբ հայ դերասանական խմբի անդամների, Թիֆլիսի «Եւրօպա» կոչված այգիում կը տայ մի ներկայացում։ Կը խաղան առաջին անգամ՝ «Օրթաճալու քէֆը», ֆարս-վոդեվիլ մէկ գործողութեամբ, «Օսկան Պետրովիչը դժոխքում», վոդեվիլ մէկ գործողութեամբ, և «Այ քեզ օյին», վոդեվիլ մէկ գործողութեամբ։ Անտրակտներում պ. Զահրին կածէ իր խմբով։ Տոմսակները կարելի է վաղօրօք ստանալ Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում»։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը տնայնագործութիւնը զարգացնելու նպատակով, ենթադրում է բանալ դպրոցներ տնայնագործների որդոց համար այն տեղերում, որտեղ այդ պարապմունքը առանձին կարևորութիւն ունի։

—

Պետերբուրգում բացվում են մի քանի նոր արհեստագիտական դպրոցներ։ Այդ դպրոցներից մէկը կը տարբերվի նախորդներից նրանով, որ այդտեղ կաւանդվեն մի քանի նոր և գործնական նշանակութիւն ունեցող առարկաներ՝ ինչպէս են օտար լեզուներ, առևտրական դիտելիքներ, և այլն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱՄԿԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԴՆԵՐՈՒՄ

—

Սեպտեմբերի սկզբներին Վաշինգտօնում հրատարակվեց Կլիվելենդի հաղորդագրութիւնը, որով նա իրան յայտարարում է իբրև ռամկապետականների թեկնածու Միացեալ-Նահանդների հանրապետութեան նախագահի պաշտօնի համար։

Այդ հաղորդագրութիւնը համարեա ամբողջապէս նուիրված է մաքսային հարցին, որը այս րօպէիս կազմում է Միացեալ-Նահանդների ամենակարևոր հարցերից մէկը։

Առաջ բերելով մի շարք հիմքեր՝ մաքսերը քըչացնելու մտքի պաշտպանութեան համար, Կլիվելենդ, ի միջի այլոց ասում է. «Մենք մտադիր չենք խաչակիրների արշաւանք սկսել ազատ առևտրի սկզբունքների օգտին։ Այն բարենորոգումները, որոնց մենք ձգտում ենք, հետևանք են այն հոգացողութեան, որ մենք ունենք ամերիկական աղգային արդիւնաբերութեան զարգացման համար։ Մենք այդ անհրաժեշտ ենք համարում, որպէս զի աղատենք երկիրը այն անարդար և վտանգաւոր դրութիւնից, որը սպառնում է նրան ներկայ հանգամանքներում»։

Կլիվելենդ իր հաղորդագրութեան մէջ բացարձակապէս յայտնում է, որ ինքը յանձն է առնում՝ ազգային—ռամկապետական պրօգրամի իրագործելը,—որը պաշտպանութիւն է խոստանում Ամերիկայի քաղաքացիներին թէ՝ հայրենիքում և թէ արտասահմանում,—պետական ֆինանսների խելացի կազմակերպելը, երկրի պաշտպանողական ոյժերի մեծացնելը, պետական հողերի պահելը՝ գաղթականների համար մենավաճառութեան սահմանափակելը, աղգային աշխատանքի իրաւունքների ճանաչել տալը, պաշտօնաթող զինուորների և նրանց կանանց և որդոց դրութիւնը ապահովացնելը, և այլ բարենորոգումներ, որոնց մէջ չէ մոռացված և հնդիկների հետ մարդասիրական յարաբերութիւն հաստատելու գործը։

Հաղորդագրութեան մէջ պարզօրէն յայտնված է, որ ռամկապետական կուսակցութիւնը ենթադրում է քչացնել հարկերը, մաքսից աղատելով արտասահմանեան այն հում նիւթերը, որոնք գործադրվում են ամերիկական գործարաններում։ Դրա հետ միասին արժանաւոր կերպով ուշադրութեան պէտք է առնվի և բանւոր դասակարգի դրութիւնը։ Բանւորների դրութիւնը լաւացնելու համար Կլիվելենդ ռամկապետականների կողմից յայտնում է, որ ձեռք կառնվեն մի շարք միջոցներ, որոնց թւումն է և այնպիսի օրէնքների հրատարակելը, որոնցով կարելի պէտք է լինի օտար երկրներից եկող բանւորների հոսանքի առաջն առնել, քանի որ օտար բանւորները աւելի ստոր լինելով ամերիկական բանւորներից իրանց մտաւոր զարգացումով և պահանջներով, համաձայնում են աւելի քիչ վարձով աշխատել, և այդպիսով մեծ մրցում են անում տեղական բանւորների դէմ։

Իր հաղորդագրութեան վերջում, ռամկապետականների առաջնորդը խօսում է և հանրապետականներին փոքրամասնութեան մասին, որը ղէմ է մաքսերը քչացնելուն, և ամեն կերպ դիմադրում է ռամկապետականների պրօգրամներին։ Հանրապետական կուսակցութիւնը աշխատում է ցոյց տալ, որ ռամկապետականները իսկապէս ծառայում են Եւրօպայի շահերին, մինչդեռ հանրապետականները աշխատում են տեղական, աղգային շահերի համար։ Ռամկապետական կուսակցութիւնը Կլիվելենդի հետ միասին յոյս է տածում՝ որ ժողովուրդը վերջապէս կը հասկանայ հանրապետական կուսակցութեան այդ տեսակ մտքերի անհիմն լինելը և կաջակցի ռամկապետականների գործունէութեան։

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՑԻՑ

—

Կ. Պոլիս, 3 սեպտեմբերի

Եթէ այս նամակս մի ժամ առաջ գրէի, այսօր պիտի հաղորդէի թէ դալ շաբաթ այս օրս պատրիարքական ընտրութիւնը կատարուած պիտի ըլլայ, բայց մէկ ժամուան տարբերութիւնը խընդիրը կերպարանափոխ կընէ. ով կրնայ գուշակել պատերազմներու մէջ ճակատամարտներու ելքն. և մենք ալ պատերազմի մէջ ենք իբարու դէմ յանուն պատրիարքական ընտրութեան։ Երէկ Ազգ. Ժողովը գումարեցաւ և որոշեց—ինչպէս արդէն իր դիւանն ու Քաղ. Ժողովը համաձայնութեամբ որոշած էին, դումարել յառաջիկայ ուրբաթ օր, սեպտեմբերի 9-ին, և կատարել պատրիարքական ընտրութիւնը. բարի լուրը տարածված էր ամեն կողմ և ահա այս րոպէիս կը հրատարակուի «Արևելք» և կը պարունակէ պաշտօնական յայտարարութիւն մը Քաղ. Ժողովոյ, որու համեմատ Ազգ. Ժողովոյ յառաջիկայ նիստը պիտի նուիրուի ուրիշ խնդրոյ։

Ահաւասիկ այդ պաշտօնագիրը։ «Վերջին պահուն հետևեալ կարևոր պաշտօնագիրն ստացանք ի հրատարակութիւն.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դիւանին Քաղ. Ժողովոյ Ազգ. կենդր. Վարչութեան։ Ազգ. կեդր. Վարչութեան Քաղաք. Ժողովոյ Դիւանն այս առաւօտ ի նիստ գումարուելով՝ ի նկատ առաւ Ազգ. Ժողովոյ երէկուան նստին մէջ Ներքին Կանոնագրի մասին եղած ինչ ինչ դիտողութիւններն և որոշեց ի պաշտօնէ Ազգ. Ժողովոյ հաղորդել այն բանակցութիւններն, որը եղած են Բ. Դրան հետ Սահմանադրութեան անթերի գործադրութեան և Ներքին Կանոնագրոյ մասին։

«Ըստ այն բանակցութեանց, Ներքին Կանոնագիրը դադարեալ է և դադարեալ կը մնայ մինչև ցընտրութիւն նոր Պատրիարքի, որում վերապահուած է յիշեալ Կանոնագրի տրամադրութիւնները կատարելապէս համաձայնեցնել Ազգ. Սահմանադրութեան և ապա հաղորդել Բ. Դրան ի հաստատութիւն։

«Հետևաբար սոյն խնդրոյն համար Ազգ. Ժողովը ի նիստ պիտի գումարի յառաջիկայ շաբթու, և այս պատճառաւ պատրիարքական ընտրութիւնն յետաձգուած է յաջորդ եօթնեկին»։ 3 սեպտ. 1888։

«Մշակի» ընթերցողներուն համար անթափանցելի խորին խորհուրդ է այս յայտարարութիւնն, որու մասին կուզեմ քիչ մը ընդարձակ խօսել, վասն զի գուցէ ապագայ փոթորիկներու ծնունդ տայ։ Ասլանեան Ստեփան փաշայի անձնական խնդիրն է, որ ազգը կը յուզէ։ Թէ ինչպէս։ Ասլանեան Ստեփան փաշա Ազգ. Ժողովոյ անդամ ընտրուած էր Գում-Քաբուի թաղին կողմանէ. օրէնք է և սովորութիւն է, որ նոր ընտրուած երեսփոխան մը կը յայտարարէ զինքն ընտրող թաղին ընտրողական ժողովին թէ կընդունի՞ այդ պաշտօն թէ ոչ։ Եթէ չընդունիր՝ նոր ընտրութիւն կը կատարուի, իսկ եթէ կընդունի՝ իր ընտրութիւնը կը ներկայացուի Ազգ. Ժողովոյ, որ եթէ օրինաւոր գտնէ այդ ընտրութիւնը, կը վաւերացնէ զայն, իսկ եթէ օրինաւոր չը գտնէ, կը բեկանէ։ Տասն և չորս տարի է, որ ընտրութիւններն այս եղանակաւ կը վաւերանան. անկէ առաջ կացութիւնը խառնակ էր. ընտրութիւններու տեղեկագիրները կը խրկուէին Ազգ. Ժողովոյ. երեսփոխաններու ընտրութիւնը վաւերանալէն յետոյ կը տեսնուէր, որ նորա կը հրաժարէին շատ անգամ, նորէն ընտրութիւն, նորէն հրաժարական. Ռուսինեանի չինած Ներքին Կանոնագիրն վերջ տուաւ այդ խառնակութիւններու։ Բայց, ինչպէս արդէն գրած եմ, այդ Ներքին Կանոնագրի հարցն այժմ խնդրոյ առարկայ եղած է մեր և կառավարութեան միջև. անշուշտ մեր ազգասէր էֆէնդիներու գաղտնի մեքենայութիւններու շնորհիւ, վասն զի այս գիտնալու էք, որ այս տեսակ խնդիրներու մէջ կառավարութիւնը միջամտելու հարկ չը տեսներ, այն պատճառաւ որ խնդիրն իրեն համար ո՛ և է կարևորութիւն չունի։ Ստեփան փաշա Ասլանեան երեսփոխան ընտրուելով չը յայտարարէր զինքն ընտրող թաղին ընտրողական ժողովին թէ այդ պաշտօն կընդունի թէ ոչ, և իրեն եղած հարցման կը պատասխանէ թէ՝ «դուք կրնա՞ք թէ ոչ զիս հուչակել երեսփոխան. քանի որ դուք այդ պաշտօնը չունիք կըսէ, ես ալ իմ հաւանութիւնս կամ մերժումս պէտք է խրկեմ Ազգ. Ժողովոյ, երբ Ազգ. Ժողովը վաւերացնէ իմ ընտրութիւնը»։ Ստեփան փաշա կը մերժէ Ներքին Կանոնագրի տրամադրութիւններն։ Խնդիրն այս վիճակին մէջ Ազգ. Ժողովին կուգայ. Ազգ. Ժողովը չը վաւերացնէր այդ ընտրութիւնը, առարկելով թէ պէտք է որ կամ Ստեփան փաշա յանձնառագիր խրկէ, կամ զինքն ընտրող թաղին ընտրողական ժողովը ծանօթագրով մը հաղորդէ թէ Ստեփան փաշա կընդունի այդ պաշտօնը։ Ազգ. Ժողովոյ այս որոշումը կը հաղորդուի Քաղ. Ժողովոյ, և այս վերջինս ալ կը գրէ Ազգ. Ժողովին, թէ Ստեփան փաշայի ընտրութիւնը օրինաւոր է, բայց չըսէր թէ Ստեփան փաշա կընդունի թէ ոչ։ Ազգ. Ժողովոյ նստին մեծ մասն երէկ այս խնդրոյն զոհուեցաւ, և Ազգ. Ժողովը մեծամասնութեամբ որոշեց թէ մինչև որ ծանօթագիր մը չը կայ ձեռնհաս իշխանութիւնէ չը պիտի վաւերացնէ այս ընտրութիւնը։ Քաղ. Ժողովը այս որոշումն իմանալով կը բորբոքի և այս առաւօտ հապճեղով կը հրատարակէ այդ պաշտօնագիրն, որուն հետևանքներն ծանր պիտի թուին։

Կը կարծեմ թէ այս խնդիրը ձեզ բաւական բախայական պիտի երևի, և կարծեմ թէ չէք ալ սխալիր, միայն ոչ միայն տղայական է, այլ ոչ ազգասիրական։ Արդարև Ստեփան փաշա անիրաւ չէ. իրմէն ապահովութիւն կուզուի թէ պաշտօնը պիտի չը մերժէ, բայց իրեն ոչ ոք ապահովութիւն կուտայ թէ իրեն ընտրութիւնը պիտի չը բեկանի, վասն զի կրնայ ըլլալ, որ ինքն ընդունի և Ազգ. Ժողովը բեկանէ անոր ընտրութիւնը իբր ապօրէն։ Սակայն այս մտածութիւններն ունեցան նաև ուրիշ երեսփոխաններ, բայց որովհետև օրէնք մը կայ, և որովհետև այդ օրէնքին դէմ այժմ հակառակութիւն կայ, այդ երեսփոխանք աւելի ընտրեցին օրէնքն յարգելով խայտառակուիլ, քան թէ իրենք ալ զօրութիւն տան օրէնքին դէմ հակառակողներուն։ Ինչ եղաւ հետևութիւնը։ Ամենուն ալ ընտրութիւնը վաւերացուեցաւ և խնդիրը փակուեցաւ։ Ստեփան փաշա կատարելապէս ապահով է թէ իրեն ընտրութիւնը պիտի վաւերացուի, ուրեմն ինչ հարկ խնդիր յարուցանել բանի մը համար, որ գոյութիւն չունի։ Ի՞նչ կըլլայ Քաղ. Ժողովին, եթէ երկու բառով իմացնէ թէ Ստեփան փաշա պիտի ընդունի՞ կամ ոչ իրեն պաշտօնը եթէ վաւերացուի։ Մեր տկար ուղեղը չըմբռնէր թէ այս մէկ բառը ըսելու համար ինչ մեծ արգելք էր, որ Ստեփան փաշա, Քաղ. Ժողով, ընտրողական ժողով, աշխարհ իրար կանցնեն, աղգը կը յուզեն, ժամավաճառ կըլլան և այդ մէկ բառը չեն արտասաներ։

Իսկ Ազգ. Ժողովն ուրիշ կերպ չէր կրնար ընել։ Ամեն մէկ երեսփոխանի քմահաճոյքը կամ տրամաբանութեանն համեմատ շարժելու կարող չէ, օրէնք մը ունի. դէշ աղէկ օրէնք է. ասոր համեմատ պիտի շարժի։

Քաղ. Ժողովն այս խնդրոյն մէջ այնպիսի ընթացք մը կը բռնէ, որ աղգը տակնուվրայ կընէ։ Քաղ. Ժողովը այն պաշտօնագրով զոր այսօր հրատարակեց «Արևելք» կը պահանջէ որ դալ նըստին Ազգ. Ժողովն անպատճառ վաւերացնէ Ստեփան փաշայի ընտրութիւնը։ Թէպէտև յայտնի չէ ըսած, բայց հրաւէրին նպատակն այս է. եթէ Ազգ. Ժողովը ականջ չը կախէ Քաղ. Ժողովն ևս պիտի հրաժարի։ Արդ ներկայ պարագայներուն մէջ Քաղ. Ժողովոյ հրաժարումը կառավարական միջամտութիւն առաջ պիտի բերէ, գուցէ պատրիարքական ընտրութեան յետաձգում և սահմանադրութեան դադարում—դէթ առժամեայ։

Իսկ եթէ Ազգ. Ժողովը այս վտանգին առջևը առնելու համար զոհողութիւն ընէ, պիտի խոնարհի, բայց դառնութիւնը սրտին մէջ պիտի մնայ և իր վրէժը Քաղ. Ժողովէն լուծելու առիթ պիտի փնտռէ։

Այ՛ս պիտի ըլլար մեր ուղղութիւնը։ Զմեզ կառավարող Քաղ. Ժողովն այսպէս հապճերով, կրքով, տղայամտութեամբ պիտի գործէ։ Այ՛ս է ազգասիրութիւն, մանաւանդ այսպիսի ժամանակներու մէջ։

Կը զարմանանք նաև Ստեփան փաշայինս—

Ստեփան փաշա ազգին մէջ մօտ քառասուն տարիէ աշխատող մէ. խելացի, ճարտար, քաջ խօսող, քաջ խորհող, քաջ գրող ժողովրդական անձ մը եղած է. շատ անգամ Ազգ. Ժողովոյ Ատենապետ, ընդհանուր համակրանք և յարգանք կը վայելէ։ Զանազան դժբաղդութիւններ ունեցաւ, այդ դժբաղդութիւնները թախծութեան, տրամութեան բանաստեղծութեամբը զինքը շրջապատեցին. պահ մը քաղաքական պարագայներն հարկադրեցին զինքը միայն բժշկութեամբ պարապել—վասն զի ճարտար բժիշկ է։—Այդ անձ մը, որ այսքան համակրելի եղած է, պէտք է որ այսպիսի չնչին խնդրով մը ազգը տակնուվրայ ընելու առիթ ընծայէ։ Եթէ պէտք է զոհողութիւն մը ընել Ազգ. Ժողովը պէտք է ընէ, թէ անհատ մը, քանի որ խնդիրն ալ անհատին համար ծանր խնդիր մը չէ։

Հաւանական է, որ Ստեփան փաշա լաւ մը չը գիտնայ թէ իւր անունը որպիսի չփոթութեանց ու խառնակութեանց չարժառիթ կըլլայ, և եթէ այս աւուր պաշտօնակէն ազդը կարդայ, կրնայ ըլլալ որ բոլորովին հրաժարի—եթէ բոլորովին չընդունի—որպէս զի ինք պատճառ չըլլայ այն ամէն չարեաց զոր կը գուշակենք։—Ճշմարիտ ազգասիրութիւնը զոհողութեան մէջ է և իրաւունք ունենք այդ զոհողութիւնը պահանջելու Ստեփան փաշայէն, քանի որ նա լաւ ազգասէր ճանչցուած է։

Ազգ. Ժողովոյ երէկի նստին մէկ մասը զոհուեցաւ Լէօն պապի կոնդակի. շատ անդէպ էր այդ խնդիրն հոն յարուցանել. «Արևելքէն» կը խրկեմ նստի այդ մասին ճշգրիտ նկարագիրը։

Պապի կոնդակն օրուան խնդիր է, բայց տպագրական տեսչութիւնը բացարձակապէս արգիլեց լրագիրներուն այս օրերս այդ խնդրոյ վրայ գրել, ուստի առայժմ յուզումն հանդարտուած կը նկատուի, արդէն այդքան յուզում աւելորդ է։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բէլգրադից հեռագրում են, որ Սերբիայի մինիստրները Նատալիա թագուհուն շնորհաւորեցին նրա անուանակոչութեան տօնը։

—Վիէննայից եկած լուրերին նայելով, կոմս Կալնօկի շուտով պէտք է տեսակցութիւն ունենայ Բիսմարկի հետ՝ քաղաքական խնդիրների պատճառով։

—«Daily News» լրագրին հեռագրում են Փարիզից, որ Սերբիայի թագուհի Նատալիան այնտեղ շատ բարեկամներ ունի, և որ առհասարակ թագուհու դրութիւնը մեծ համակրութիւն է առաջ բերել Ֆրանսիացիների մէջ։

—Բերլինից գրում են, որ պրուսական պահպանողականների և ազգային-ազատամիտ կուսակցութեան մէջ համաձայնութիւն է կայացել, այնպէս՝ որ պրուսական լանդտագի ընտրութիւնները աջող հետեանք կունենան այդ կուսակցութեան համար։ Պահպանողական կուսակցութիւնը առհասարակ մեծ աջողութիւն է երևակայում ունենալ, քանի որ Վիլհելմ կայսրի օրով դերմանական ներքին քաղաքականութիւնը ընդհանրապէս պահպանողական բնաւորութիւն ունի։

—Եւրոպական մամուլը այժմ աւելի քան երբ և իցէ զբաղված է Միլան թագաւորի և Նատալիա թագուհու ապահարզանի հարցով. այդ հարցը քննվում է ոչ թէ միայն ամուսնական յարաբերութիւնների և եկեղեցական օրէնքների, այլ և նոյն իսկ քաղաքական տեսակէտներից,—բայց առ այժմ յայտնի չէ թէ ինչ որոշ հետեանք կունենայ այդ բանը։ Ենթադրութիւններ կան, որ երկու թշնամի ամուսինները՝ զիջողութիւններ անելով միմեանց՝ պաշտօնապէս կը շարունակեն իրանց ամուսնական կեանքը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՏԱՇԿԷՆՏ, 7 սեպտեմբերի։ Լուրեր են տարածվել աֆղանական էմիր Աբդուրահմանի յանկարծական մահուան մասին։

ԽԱՐԿՕՎ, 7 սեպտեմբերի։ Հանքագործարանատէրերի արտակարգ նիստը պիտի դումարվի սեպտեմբերի 12-ին, քննելու այն հարցը, որը վերաբերում է ածուխի ճգնաժամի առաջն առնելու միջոցներին. սովորական նիստը կը դումարվի նոյեմբերին։

ԲԵՐԼԻՆ, 8 սեպտեմբերի։ Բերլինի նահանգապետ գեներալ Վէրդէր, հրաժարականի մասին իր տուած խնդիրքի համաձայն, նշանակված է պահեստի մէջ։

ՓԱՐԻԶ, 8 սեպտեմբերի։ Մինիստրների խորհուրդը այսօր վճռեց, որ առիթ չը կայ դադարեցնելու ներմուծվող հացահատիկներից հինգ ֆրանկի մաքսահարկ վերցնելը։

ՍԻՄԼԱ, 8 սեպտեմբերի։ («Բէյտերի գործակալութեան հեռագիր»)։ Այստեղ լուր չէ ստացվել Աբդուրահման խանի մահուան մասին, և դրան վերաբերվող լուրերին չեն հաւատում։

ՈՒՖԱ, 9 սեպտեմբերի։ Երէկ, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի ներկայութեամբ, կայացաւ Սամարա-Ուֆիմեան երկաթուղու բացումը։

ՖՐԻԴՐԻԽՍՐՈՒԷ, 9 սեպտեմբերի։ Կոմս Կալնօկի այսօր Ֆրիդրիխսրուէից ճանապարհ է ընկնում դէպի Վիէննա։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԵՕԼԷՐԵԱՆ ՀԵՂՈՒԿ

ԲԱՂԼԻՆՋՆԵՐԻ ԵՒ ՈՒՏԻՃՆԵՐԻ

ԴԷՄ

Լինելով միակ և անպայման արմատական, մի և նոյն ժամանակ ամենաէժան և ամենաքին մատչելի միջոց այդ միջատների դէմ, ծախվում է կատարեալ երաշխաւորութեամբ յայտնի ֆիրմայի

Ր. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ., Նիկոլսկայա փողոցում։

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր վաճառականների մօտ։

№ 12. Ц. К. О. (1—3)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈԳԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ.

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանդիստների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԷՐՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլօվինսկի պրոսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլիի տանը։

25—40

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻԱՆ ԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրա, № 11։ Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդոնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Յովհաննիսեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

13—20 (Ե. Շ.)

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑՉԻ“

Նոր տպագրութիւնները

—

1) Երկրորդ տարի՝ երկրորդ տիպ, հիմնովին փոփոխած։ Պարունակում է 100-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 144 երեսից։ Գինն է 35 կոպէկ։

2) Չորրորդ տարի՝ երրորդ տիպ, ճոխացրած։ Պարունակում է 60-ից աւելի նոր յօդուած, և բաղկացած է 308 երեսից։ Երկրորդ տիպը բաղկացած էր 272 երեսից։ Գինը առաջվանն է՝ 60 կոպէկ։

Գումարով առնողներին 20% զիջում։ Ցօրինողին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։

Երրորդ տարի՝ (նախկին) երրորդ տիպ. գինն է 40 կոպէկ։ Ծախվում է միայն գրավաճառանոցներում։

Ցօրինողի հասցէն. „Тифлисъ, Авлабаръ. учителю Ованесу Назарянцъ“.

2—4 (Ե. Շ.)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական (նոյնպէս և ատամնացաւի) և վներ. ց
ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ՍՕԲՕԼԵՎ—11—12 ժ. ատամնաբոյժ.
ՏԱՐՍԱՑԻՉԷ—12—1 ժ. ամեն օր, բացի կիւրակի. աչքացաւ.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—$6^1/_2$ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—$6^1/_2$—$7^1/_2$ ժ.ներքին և երեխայոց ց.

Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօզեր։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑԱԻ

„ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ“

Շեկսպիրի ողբերգութիւնը թարգմ. Ստեփ. Մալխասեանց

ԳԻՆԸ ՄԷԿ ռուբլի։ Դումարով առնողներին զիջում կը լինի։ Դիմել Թարգմանչին

С. Петербургъ, Литейный, 27.

1—3 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

„ԱՐԱՄԲԻՆ“

Վէպ։

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. կենտրոնական գրավաճառանոցում, իշխ. Բէհբութեանի և Աբգ. Յովհաննիսեանի գործակալութեան մէջ և հեղինակի մօտ. Тифлисъ, Редакція «Арцаганкъ», Ширванзадэ.

Գինն է 75 կոպ.

Ճանապարհածախսով 1 ր.

10—10

Дозволено цензурою, Тифлисъ 9 Сентября 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.